ՄԵԾ ՀԱՅՔԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ ՀԱՅ-ՀՌՈՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ (I դ. երրորդ քառորդ)

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մ. թ. 54 թ. Հայաստանում տեղի ունեցած դեպքերը՝ հայ ապստամբների կողմից հայկական գահի հափշտակիչ Հռադամիզդի վտարումը, դաշնակից պարթևական զորքերի մուտքը Հայաստան և Տրդատ Արշակունու (54—80 թթ., օրինական ճանաչված 66 թ.) գահակալումը, զրոյի էին հավասարեցրել Հայաստանի նկատմամբ Հռոմի ունեցած հավակնությունները։ Դա նշանակում էր ոչ միայն Հայաստանի ընդգրկումը հակառակորդ պետության՝ պարթևական Իրանի, քաղաքականության ոլորտը, այլև նախադրյալներ էին ստեղծվում դեռևս Արտավան Գ-ի (12—38 թթ.) ժամանակ առաջ քաշված «Արշակունիները Աքեմենյանների ժառանգորդներն են»[1] աշխարհակալական ծրագրի իրագործման համար։ Ահա թե ինչու այդ նույն թվականին Հռոմում գահ բարձրացած Ներոնը (54—68 թթ.) գործի էր դրել հռոմեական հետախուզական, դիվանագիտական և ռազմական ապարատները՝ կայսրության դիրքերն Արևելքում կայունացնելու և պարթևներին Հայաստանից վտարելու համար։

Պարթևներին Հայաստանից հեռացնելու և հայկական հարցը վճռելիս ձեռքերի ազատություն ստանալու նպատակով հռոմեացիները Վաղարշ Ա-ի (51—75 թթ.) դեմ որպես Արշակունիների իրանական գահի հավակնորդ դուրս էին բերել Պարթևական Իրանի նախկին թագավոր Վարդանի որդուն[2]։ Հազիվհազ հաշիվները սրա հետ փակած՝ Վաղարշը ստիպված էր եղել իր ուշադրությունը բևեռելու Իրանի հյուսիս-արևելքի վրա։ Այստեղ՝ Վրկանում, հուժկու ապստամբություն էր բռնկվել Արշակունիների կենտրոնական իշխանության դեմ։

Հայկական հարցի վերջնական լուծմանը կոչված իր ծրագրի իրագործումը Ներոնը սկսել էր Մեծ Հայքին սահմանակից երկրներում հակապարթևական և հակահայկական տարրն ուժեղացնելով[3]։ Փոքր Հայքում գահընկեց էր արվել Կոտիսը և նրա փոխարեն գահ էր բարձրացվել Արիստոբուլոսը, Մեծ Հայքից անջատված Ծոփքում թագավոր էր նշանակվել Սոհեմոսը, Պոնտոսի թագավոր Պոլեմոն Բ-ին, Կոմմագենեի Անտիոքոս Դ և Քաղկիդիկեի (Խալկիդիկե) Ագրիպպա արքաներին կարգադրվել էր մարտական վիճակում պահել իրենց զորքերը՝ հարկ եղած դեպքում դաշնակից հռոմեացիներին միանալու

---

1 *Հմմտ.* Tac., Ann., VI, *31։*

2 *Նույն տեղում, XIII, 7։ Վաղարշ Ա-ի այս հակառակորդը ոչ թե նրա «Վարդան որդին» էր* (filius Vardanes), *այլ «Վարդանի որդին»* (filius Vardanis)։ *Այս առթիվ տե՛ս* Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 328, ծան. 1 (տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 735)։*

3 О. В. Кудрявцев, Восточная политика Римской империи в начале правления Нерона («Вестник древней истории», 1948, № 2, *էջ 85)։*

համար[4]։ Կապադովկիայի կուսակալ, լեգատ և Արևելքի հռոմեական զինված ուժերի գլխավոր հրամանատար էր նշանակվել խոշոր զորավար և քաղաքական գործիչ Գնեյոս Դոմիտիոս Կորբուլոնը[5]։

Հռոմի ձեռնարկած այս նախապատրաստությունների առթիվ ուշադրության արժանի վկայություններ կան պահպանված ոչ միայն Տակիտոսի, այլև Մովսես Խորենացու հաղորդումներում։ Ճիշտ է, Խորենացու «Հայոց պատմության» մեջ Արշակունի արքայատոհմի հայկական ճյուղի իրական հիմնադիր Տրդատ Ա-ի փոխարեն հանդես է գալիս ավանդական հիմնադիր Վաղարշակը, հռոմեացիների փոխարեն նրա հակառակորդները մակեդոնացիներն են. բայց հայտնի է, որ Վաղարշակի կերպարում պահպանված են հիմնականում Տրդատ Ա-ի գծերը, իսկ «մակեդոնացիների» ղեկավար Մորփիուղիկը հռոմեական զորավար Կորբուլոնն ինքն է[6]։ Վաղարշակի կողմից Արմավիրում անցկացված զորահավաքի նկարագրումից հետո Խորենացին շարունակում է. «Եւ աստի միաբանեալ զբոլոր կողմանս աշխարհիս՝ հասանէ առ սահմանաւք Խաղտեաց։ Քանզի Ղաղիկայ, Պոնտոս, Փռիւգիայ, Մաժաք եւ այլք, ոչ գիտելով զհամբաւ պատերազմին Արշակայ՝ առ Մակեդոնացւոց պետութիւնն զմիաբանութիւն դաշանցն հաստատուն պահէին։ Վասն որոյ ոմն Մորփիւղիկեայ միաբանեալ զասացեալ կողմանս զայսոսիկ, եւ գրգռի ի պատերազմ ընդ Վաղարշակայ»[7]։

Փոքր Հայքից Սատաղ-Արտաշատ ճանապարհով Կորբուլոնի բանակը ներխուժելով Մեծ Հայք, 57—58 թթ. ձմեռը անց էր կացրել Կարնո դաշտում[8], իսկ գարունը բացվելուն պես՝ վերսկսել ռազմական գործողությունները։ Այդ նույն ժամանակ արևմուտքից և հյուսիսից Մեծ Հայք էին ներխուժել հարևան երկրների Հռոմի դաշնակից թագավորների զորքերը և նրանց ենթակա ցեղերը[9]։ Մեծ Հայք ներխուժելիս ընտրելով Սատաղ-Արտաշատ ուղղությունը, Կորբուլոնը հաշվի էր առել իր բանակը սևծովյան նավահանգիստներից (հատկապես Տրապիզոնից) եկող անհրաժեշտ պարենով ապահովելու հանգամանքը։ Իսկ Տրդատը, որը ստիպված էր եղել նրա դեմ դուրս գալու գլխավորապես հայկական ուժերով (պարթևական զորքերի հիմնական մասը Վաղարշ Ա-ի գլխավորությամբ կաշկանդված էր Վրկանում), խուսափել էր ճակատամարտից, չանալով մանր կռիվների միջոցով ջլատել թշնամու ուժերը, նրան զրկել անխափան կերպով պարեն ու անասնակեր ստանալու հնարավորությունից[10]։

Այս առթիվ հետաքրքիր է Տակիտոսի հետևյալ վկայությունը. «Արդ, Կորբուլոնը երկար ժամանակ և ապարդյուն աշխատելով նրան (Տրդատին—Ս. Պ.) ճակատամարտ տալ՝ ստիպված էր [այնուհետև] թշնամու օրինակով մասնատել ռազմական գործողությունները։ Նա իր ուժերը բաշխեց լեգատների և պրեֆեկտների միջև, որպեսզի նրանք միաժամանակ ներխուժեն Հայաստանի

---

4 Tac., Ann., XIII, 7 (տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 735)։

5 Tac., Ann., XIII, 8.

6 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 432։

7 «Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն հայոց», Տփղիս, 1913, էջ 106։

8 Tac., Ann., XIII, 35 (տե՛ս նաև Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 328)։

9 Tac., Ann., XIII, 7, XIII, 37 (տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 737)։

10 Tac., Ann., XIII, 39.

զանազան վայրերը։ Նա համոզից նույնպես Անտիոքոս թագավորին՝ հարձակվել իրեն ամենամոտ շրջանների վրա։ Իսկ Փարսմանը, իբր թե դավաճանության համար սպանելով իր որդի Հռադամիզդին, ջանում էր ցույց տալ իր հավատարմությունը մեր նկատմամբ՝ սկսեց ավելի համարձակ գործել հայերի դեմ, որոնց նկատմամբ նա տածում էր հին ատելություն։ Եվ այդ ժամանակ առաջին անգամ մեր կողմը գրավվեցին մոսխերը, այս ցեղն այժմ էլ ուրիշներից ավելի հավատարիմ է հռոմեացիներին, որոնք հարձակվեցին Հայաստանի հեռավոր դժվարամատույց վայրերի վրա»[11]։

Ինչպես պարզվում է բերված հատվածից, Կորբուլոնը Մեծ Հայքին հյուսիսից հարևան իր դաշնակիցներին նախապես պատվիրել էր հարձակվելու Տայքի, Խորձենեի («Աշխարհացույց»-ի արևմտյան Գուգարքը) և բուն Գուգարքի («Աշխարհացույց»-ի արևելյան Գուգարքը) վրա, որոնցով էին անցնում պոնտական և կողքիսյան նավահանգիստներից հայոց միջնաշխարհ տանող ճանապարհները։ Սա Կորբուլոնին հնարավորություն էր տվել հիշյալ ճանապարհների հսկողության համար լեռներն ուղարկել հռոմեական առանձին ջոկատներ, իսկ հռոմեական ու դաշնակից բանակների հիմնական մասը տանել Այրարատ։ Հռոմի այս դաշնակիցների կողմից իրենց ստացած հանձնարարությունների իրագործման շնորհիվ էր, որ ի դերև էին ելել հռոմեական ու դաշնակից բանակների մատակարարման գործը խափանելու ուղղությամբ Տրդատի գործադրած ջանքերը[12]։

Տակիտոսի վերոբերյալ հաղորդումը միևնույն ժամանակ ցույց է տալիս, որ վրաց Փարսման Ա թագավորի և մոսխերի հետ միասին հիշատակված Անտիոքոս թագավորը չէր կարող լինել Կոմմագենեի Անտիոքոս Դ արքան։ Հավանաբար, սա եղել է «հենիոխների և մաքելոնների» թագավորը, որի երկիրը գտնվում էր Պոնտոսից արևելք, հայկական Սպեր և Տայք շրջանների, Մոսխերի երկրի (հետագա Սամցխե և Աճարա գավառները) և Սև ծովի միջև[13]։ Այս դեպքում պետք է ենթադրել, որ հենց հենիոխ-մաքելոնական հրոսակախմբերի ներխուժմանն էր ենթարկված եղել սահմանակից Տայքը, երբ, հավանաբար, վերջինիս հարևան Խորձենեն («Աշխարհացույց»-ի արևմտյան Գուգարքը) դարձել էր մոսխերի, իսկ Գուգարքը («Աշխարհացույց»-ի արևելյան Գուգարքը)[14]՝ Փարսման Ա-ի զորքերի ասպատակությունների թատերաբեմ։

Տրդատ Ա-ին Հայաստանից վտարելուց հետո (60 թ.), դեպքերին իրազեկ Տակիտոսի վկայությամբ. «Հրի ու սրի մատնելով նրանց բոլորի տիրույթները, որոնց մեր դեմ տածած թշնամանքին տեղյակ էր, Կորբուլոնն արդեն իր ձեռքն էր առել ամբողջ Հայաստանը, երբ ժամանեց Տիգրանը՝ Ներոնի կողմից

---

11 Նույն տեղում, 37։

12 Նույն տեղում, 39։

13 Տե՛ս «Հայաստանը մ. թ. ա. 66—մ. թ. 222 թվականներին» քարտեզը («Հայ ժողովրդի պատմություն», հ. I)։

14 «Աշխարհացույց»-ի Գուգարքի տարածքում ավելի վաղ երկու առանձին վարչական միավորների՝ Խորձենե (արևմուտքում) և Գոգարենե (արևելքում), գոյության վերաբերյալ տե՛ս Strabo, XI, 4, 5, XI, 14, 4, XI, 14, 5 (տե՛ս նաև Я. А. Манандян, Маршруты понтийского похода Помпея и путь отступления Митридата в Колхиду («Вестник древней истории», 1940, № 3—4, էջ 98—99), Բ. Հարությունյան, Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի («Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 2, էջ 176—197), «Արտաշեսյանների թագավորությունը մ. թ. ա. I դ.» քարտեզը («Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, Երևան, 1976)։

ընտրված նրա իշխողը»[15]։ Տիգրան Զ-ի (60—61 թթ.) գահակալումը նշանակում էր Հռոմի նոր, բայց կարճատև հաջողությունը։ Դրա ժամանակավոր լինելը գիտակցում էին նաև Հռոմում։ Ուստի, պարթևա-հայկական կողմի ապագա ուժեղացման դեպքում Հայաստանի պաշտպանությունը անդամալուծելու և հարևան երկրների, կախյալ թագավորների ու ցեղերի հետագա աջակցությունն ապահովելու նպատակով Հռոմը նրանց էր վստահել հայկական սահմանամերձ շրջանների կառավարումը՝ փաստորեն ճանաչելով դրանց անջատումը Մեծ Հայքից։

Հռոմեական նոր դրածոյի մուտքը Հայաստան նկարագրելուց հետո Տակիտոսն ավելացնում է. «Տիգրանին տրվեց հազար լեգեոնականներից, դաշնակից երկու կոհորտներից և օժանդակ հեծելազորի երկու ջոկատներից բաղկացած մի պահակախումբ։ Եվ որպեսզի նրա համար ավելի հեշտ լինի նոր գահը պահպանել, Հայաստանի առանձին մասերը՝ նայած թե ում հողերին էին դրանք հարում, կարգադրություն ստացան հնազանդվել Փարսմանին, Պողեմոնին, Արիստոբուլոսին և Անտիոքոսին»[16]։

Հարկավ, բանը Տիգրան Զ-ի կառավարումը հեշտացնելը չէր։ Դա պատրվակ էր միայն։ Խնդրո առարկա շրջանները, որոնք Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան և հյուսիսային ծայրամասերն էին, հայկական պետության կազմից դուրս մնալով՝ դրանով իսկ նրան զրկում էին Պոնտական, Պարխարյան, Խորձենական և Գուգարաց լեռներում ունեցած պաշտպանական բնագծերից։ Դրանց անցումը Հռոմի դաշնակիցներին ու վասալներին՝ կայսրությանը հնարավորություն էր ընձեռում անհրաժեշտության դեպքում հյուսիսից ևս ուժեղացնելու ճնշումը Մեծ Հայքի գահակալների վրա թե՛ սրանց, թե՛ «հյուսիսականների» (Հյուսիսային Կովկասի սարմատական և լեռնցի ցեղերի) միջոցով։ Միևնույն ժամանակ Մեծ Հայքի տարածքը կրճատելու իր քաղաքականությամբ Հռոմը ձգտում էր այն վերածել այնպիսի երկրորդական կարգի վասալ թագավորության, ինչպիսիք էին Կոմմագենեն, Ծոփքը, Փոքր Հայքը և նրանց մյուս հարևանները, որոնց գահակալները խաղալիք էին Հռոմի ձեռքին[17]։

Մեծ Հայքի նկատմամբ Հռոմի որդեգրած այս քաղաքականությունը սկսել էր կիրառվել տասնամյակներ առաջ։ Այսպես, օրինակ, Մեծ Հայքի կազմից դեռևս մ. թ. սկզբին դուրս էր մնացել և Հռոմի դաշնակից աղվանների տիրապետության տակ էր անցել Կասպքը (Կասպիանա)[18]։ Հռոմեա-պարթևական 37 թ. պայմանագրով Մեծ Հայքից անջատվել էին՝ հարավում Միջագետքի հայկական հատվածը (որն անցել էր Ադիաբենեի թագավորությանը), իսկ հյուսիսում՝ Գողերձական կուսակալությունը (այն դրվել էր Վիրքի թագավորների ենթակայության տակ)[19]։ 55 թ. դրանց ավելացել էր Ծոփքը, որտեղ ստեղծվել էր Հռոմից կախյալ հայկական առանձին թագավորություն[20]։

---

15 Tac., Ann., XIV, 26.
16 Նույն տեղում։
17 «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 741։
18 Հմմտ. Strabo, XI, 14, 5 և XI, 4, 5։
19 «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 720։
20 Tac., Ann., XIII, 7.

Այժմ՝ 60 թ., դրանց շարքն էին մտնում Մեծ Հայքի հյուսիսային և հյուսիս-արևմտյան ծայրամասերը՝ Գուգարքը, Խորձենեն, Տայքը, Սպերը և Ակիլիսենեն[21] (Եկեղեաց գավառն հարևան շրջանների հետ միասին)[22]։ Հայկական այս ծայրամասերը հարում էին բուն Վիրքին, Մոսխերի երկրին, «Հենիոխների և մաքելոնների թագավորությանը», Պոնտոսին և Փոքր Հայքին։ Դրանցից Վիրքի Փարսման Ա թագավորն ստացել էր բուն Գուգարքը, նրան ենթակա մոսխերը՝ Խորձենեն, Պոնտոսի Պողեմոն Բ-ն՝ Սպերը, իսկ Փոքր Հայքի Արիստոբուլոս արքան՝ Ակիլիսենեն։ Տակիտոսը նշում է, որ անջատված հայկական ծայրամասերից իր բաժինն էր ստացել նաև Անտիոքոսը։ Եթե հանձին այս վերջինի Տակիտոսը նկատի ուներ Կոմմագենեի արքա Անտիոքոս Դ-ին, ապա, ինչպես իրավամբ ենթադրում է Ս. Երեմյանը, Տակիտոսի հաղորդած այս տեղեկությունը, թերևս, ճիշտ չէ, «...որովհետև այդ թագավորության (Կոմմագենեի—Ս. Պ.) տերիտորիան 37 թ. հետո, երբ Հայոց Միջագետքը անցավ պարթևներին ենթակա Ագիարենեի թագավորությանը, ընդհանուր սահման չուներ Մեծ Հայքի հետ, մանավանդ, որ այժմ, բացի դրանից, գոյություն ուներ Նոփաց թագավորությունը, որն ընկած էր Կոմմագենեի և Մեծ Հայքի միջև»[23]։

Հնարավոր է, սակայն, որ այս դեպքում ևս խոսքը վերաբերում է հենիոխների և մաքելոնների վերոհիշյալ թագավորին։ 57—58 թթ., ինչպես տեսանք, երբ Կորբուլոնը հռոմեական և դաշնակից բանակներով Սատաղից շարժվում էր դեպի Հայաստանի խորքերը, հենիոխների ու մաքելոնների հրոսակախմբերը մոսխերի և Փարսմանի գլխավորած վրացական զորքերի հետ միասին ներխուժել էին Մեծ Հայքի հյուսիսային սահմանամերձ շրջանները՝ Տայք, Խորձենե և Գուգարք։ Ըստ այսմ, հենիոխների ու մաքելոնների թագավոր Անտիոքոսը պետք է բաժին ստացած լիներ իր թագավորությանը հարևան Տայքը, որն ընկած էր Փարսմանի և նրան ենթակա մոսխերի ստացած Գուգարք-Խորձենե շրջանների (հյուսիս-արևելքից) և պոնտական թագավոր Պողեմոն Բ-ի ստացած Սպերի (արևմուտքից) միջև։ Դեպքերի հետագա ընթացքից էլ է երևվում, որ մինչև 64 թ. Տայքն անջատված է եղել Մեծ Հայքից և հյուսիսային ու հյուսիս-արևմտյան մյուս շրջանների նման վերանվաճվել ու Հայաստանի գիրկն էր վերադարձվել Տրդատ Ա-ի (ավանդական Վաղարշակի) կողմից[24]։

Տրդատի արտաքսումը և նրա փոխարեն Մեծ Հայքում հռոմեական դրաոո Տիգրան Զ-ի գահակալումը, ինչպես պարթևական վերնախավի, այնպես էլ հայ ավագանու մեծամասնության մեջ ընդհանուր դժգոհություն էին հարուցել Վաղարշ Ա-ի վարած քաղաքականությունից։ Ի վերջո, նրանց ճնշման տակ, Վաղարշը հաշտվել էր ապստամբ վրկանցիների հետ և օժանդակ ուժեր ստանալով այնտեղից, դարձել էր արևմուտք՝ վերսկսելով պատերազմը Հռոմի դեմ[25]։

Մովսես Խորենացու օգտագործած աղբյուրների համաձայն, Վաղարշ Ա-ն (Արշակ Մեծ) մտադիր է եղել Արշակունիների ապագա աշխարհակալության

---

21 «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 741—742։

22 «Այդ սահմաններում Ակիլիսենեն ներկայացնում էր բավականին ընդարձակ մի երկիր՝ ներառելով այն ամբողջ տարածքը, որն հետագայում բռնում էին Եկեղիքը, Դարանաղին, Մանազին (Մանանաղին—Ս. Պ.), Աղյունը և Մուզուրը» (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 55)։

23 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 742։

24 Մ. Խորենացի, էջ 108։

25 Tac., Ann., XV, 2.

արևմտյան կևսը միավորելու իր եղբայր Տրդատ Ա-ի (Վաղարշակ) գերագույն իշխանության տակ[26]։ Նրա սահմանները (գլխավորապես արևմուտքում և հյուսիսում) ավելի ընդարձակ պետք է լինեին, քան էին Տիգրան Բ-ի ժամանակաշրջանում։ Բացի Մեծ Հայքից այն պարունակելու էր նաև «...զմասն ինչ յարեւմտեայ Ասորւոց և զՊաղեստին և զԱսիա և զամենայն Միջերկրեայս և զԹեսալիա, ի ծովէն Պոնտոսի մինչև ի տեղին՝ ուր Կաւկաս յարեւմտեանն յանգի ի ծով, և զԱտրպատականն»[27]։

Անանունից Հայտնի հայ պատմական ավանդության համաձայն, Մեծ Հայքի գահակալին անմիջապես ենթակա երկրի համար Արշակ Մեծը (Վաղարշ Ա) հատել էր հետևյալ սահմանները. «...զԱրուաստան առ երկրաւն Տաճկաց եւ առ երկրաւն Ասորւոց, եւ զԿապուտկեայ առ Կիւզիկեաւ, մինչեւ ցեզր ծովուն մեծի արեւմտից. եւ ցհիւսիսոյ կողմանէ ի լիառն մեծ Կովկաս, որ ձգի ընդ կողմանս արեւելից եւ անցանէ առ սահմանաւն առ ամուր աշխարհաւն Մարաց, եւ հասանէ ի լեառն Զարասպ, եւ անցանէ առ Նոր Շիրակ երկրաւն»[28]։

Ինչպես տեսնում ենք, հակառակ Հռոմի, որն աշխատում էր ամեն կերպ կրճատել Մեծ Հայքի տարածքը, նրան զրկել փոքրասիական և կովկասյան սահմաններում ունեցած իր պաշտպանական բնագծերից, Վաղարշ Ա-ն ձգտում էր ընդարձակել նրա սահմանները ի հաշիվ նրա արևմտյան (փոքրասիական) ու հյուսիսային (կովկասյան) հարևանների և, դրանով իսկ, լրացուցիչ պատվարներ ստեղծել մի կողմից Մեծ Հայքի ու Հռոմեական կայսրության, մյուս կողմից՝ նրա ու «հյուսիսականների» միջև։ Սա մեկն էր այն գլխավոր պատճառներից, որոնք մ. թ. I դ. կեսից սկսած շահերի զուգադիպության հողի վրա Հայաստանում ի մի էին ձուլել հայրենասեր և պարթևասեր կուսակցությունները՝ հայ հասարակության բոլոր խավերի մեջ Արշակունիների կողմնակիցների համար ապահովելով բացարձակ մեծամասնություն։

Արևմուտք վերադառնալուց հետո Վաղարշ Ա-ն իր բանակը բաժանել էր երկու մասի. մեկը իր զորավար Մոնեսի (Մանեճ) և Ադիաբենեի թագավոր Մոնոբազ (Մանավազ) Բ-ի հրամանատարությամբ ուղարկել էր Հայաստան՝ Տրդատին հայկական գահին վերահաստատելու համար, իսկ մյուսը իր հետ տարել դեպի Ասորիք։ Կորբուլոնը Տիգրան Զ-ին օգնության ուղարկելով ևս երկու լեգեոն, հռոմեական մնացած զորքով ամրացել էր Եփրատի ափին, որպեսզի արգելեր պարթևական բանակի մուտքը Ասորիք[29]։ Իսկ Տիգրան Զ-ն, խուսափելով ճակատամարտից, հռոմեական լեգեոնների հետ միասին փակվել էր պարթևա-հայկական դաշնակից ուժերի կողմից պաշարված Տիգրանակերտում[30]։ Կորբուլոնը հասկանալով, որ ապագան Հռոմի համար ոչ մի լավ բան չի խոստանում՝ հանդես էր եկել բանակցություններ սկսելու առաջարկով։ Վաղարշն ընդառաջել էր և համաձայնել «դեսպաններ ուղարկել կայսրի մոտ, որպեսզի Հայաստանն իրեն տրվի և հաշտություն կնքվի։ Մոնեսին նա հրամայում է թողնել Տիգրանակերտը, ինքը ևս ետ է քաշվում»[31]։

---

26 «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 746։

27 Մ. Խորենացի, էջ 29։

28 «Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 9։

29 Tac., Ann., XV, 4—5; Cass. Dio, LXII, 20.

30 Tac., Ann., XV, 4—5.

31 Նույն տեղում, 5։

Միաժամանակ «ռազմական գործողությունների երկկողմանի դադարեցումից և Վաղարշի հեռանալուց հետո, Տիդրանը նույնպես պետք է թողներ Հայաստանը»[32]։

Վաղարշի առաքած դեսպանները Հռոմից վերադարձել էին ձեռնունայն։ Ներոնը որոշել էր հայկական հարցը լուծել Հայաստանը հռոմեական պրովինցիա դարձնելու միջոցով։ Այդ նպատակով նա 61 թ. Հայաստան ուղարկված հռոմեական բանակի գլխավոր հրամանատար էր նշանակել Կեսենիոս Պետոսին, որը, սակայն, Հռանդեայում պարթևա-հայկական ուժերի կողմից 63 թ. պաշարվելուց հետո, ստիպված էր եղել հանձնել գրաված բոլոր ամրությունները, ամբողջ զենքը, գերիներին, ավարն ու պարենը և հեռանալ Հայաստանի սահմաններից[33]։ Այս բանը Ներոնին ստիպել էր փոխելու իր քաղաքականությունը հայկական հարցում։ 64 թ. կրկին Հայաստան ժամանած Կորբուլոնը հասել էր պարթևա-հայկական կողմի համաձայնությանը, որ «Տրդատը կայսեր արձանի մոտ դնի թագավորական նշանը և ետ վերցնի միայն Ներոնի ձեռքից»[34]։ Հաջորդ տարի Տրդատը ուղևորվել էր Իտալիա, որտեղ Ներոնի ձեռքով թագադրվելուց հետո՝ 66 թ. վերադարձել էր Հայաստան։

Հռոմի կողմից Տրդատի ճանաչումը որպես Մեծ Հայքի օրինական գահակալի՝ նշանակում էր Հռոմի հրաժարումը ինչպես Մեծ Հայքի գահի, այնպես էլ նրա տարածքի այս կամ այն մասի նկատմամբ ունեցած հավակնություններից։ Հռոմի փոքրասիական և կովկասյան վասալներն ու դաշնակիցները այժմ ստիպված էին հրաժարվել Մեծ Հայքի սահմանամերձ շրջանների նկատմամբ իրենց տրված «իրավունքներից»։ Ըստ այսմ, Մեծ Հայքին պետք է վերադարձվեր ոչ միայն Ծոփքը, այլև Փոքր Հայքին, Պոնտոսին, «Հենիոխների և մաքելոնների թագավորությանը», մոսխերին և Վիրքին անցած հայկական շրջանները՝ Եկեղիքը (Ակիլիսենեն), Սպերը, Տայքը, Խորձենեն և Գուգարքը։ Դրանցից վերջին երեքը վերադարձնելիս Տրդատ Ա-ն մասամբ դուրս էր մղելու, մասամբ իրեն էր ենթարկելու տեղերում հաստատված հենիոխների, մաքելոնների, մոսխերի և «հյուսիսականների» հրոսակախմբերը։ Ըստ երևույթին, նա այդ գործին ձեռնամուխ էր եղել նախքան 65 թ. վերջին թագադրության համար Հռոմ մեկնելը։

Տրդատի այս գործողությունների վերաբերյալ ուշադրության արժանի վկայություններ կան պահպանված Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ։ Նկարագրելով Մորփյուղիկի զորքերի կրած պարտությունը Վաղարշակի պարթևա-հայկական ուժերից[35], մեր պատմահայրը «Եթէ որպէս կարգեաց Վաղարշակ զարեւմուտս եւ զհիւսիսի մերոյ աշխարհիս» վերնագրի տակ շարունակում է. «Եւ այսպէս կատարեալ՝ կարգէ զկողմանս Մաժաքայ եւ զՊոնտացիս եւ զԵգերացիս. դառնայ զհիւսիսեաւ առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց, ի գիջին եւ ի մառախլուտ տեղիս մայրեաց եւ ի լեռաւէտս... Եւ աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն, որ ի դաշտին հիւսիսոյ եւ որ զստորոտով մեծի լերինն Կաւկասոյ, եւ որ ի հովիտս կամ ի ձորս երկայնաձիգս խորացեալս, ի լեռնէն որ զհարաւով՝ իջեալ մինչ ի դաշտաբերանն մեծ. պա-

32 Նույն տեղում, 6։
33 Նույն տեղում, 14։
34 Նույն տեղում, 29։
35 Մ. Խորենացի, էջ 107։

տուէր տալով զաւազակութիւն եւ զմարդադաւութիւն ի բաց քեցել յինքեանց, եւ հրամանաց եւ հարկաց արքունի հպատակ լինել. որպէս զի միւսանգամ տեսեալ զնոսա՝ առաջնորդս եւ իշխանս հանդերձ գեղեցիկ կարգաւք հաստատեսցէ։ Եւ արձակէ զնոսա հանդերձ արամբք իմաստնովք եւ վերակացուօք յիւրմէ։ Եւ ինքն արձակեալ զարեւմտեայ բազմութիւնն՝ իշանէ ի տեղիս խոտաւէտս մերձ ի սահմանն Շարայի. զոր հինքն Անփայտ և Վերին Բասեան կոչէին...»[36]։

Ըստ երևույթին, նույն այդ ժամանակ Տրդատ Ա-ի թագադիր և զորահրամանատար Շամբատ Բագարատը (Սմբատ Բագրատունին) փորձ էր արել վերադարձնելու նաև Մեծ Հայքի նախկին հյուսիսային կուսակալությունը՝ Գոդերձականը, որը բնակեցված էր մոսխերով և Վիրքի գերիշխանության տակ էր դրվել համաձայն 37 թ. հռոմեա-պարթևական պայմանագրի[37]։ Նախ, այս Շամբատ Բագարատի մասին։ Ըստ Մովսես Խորենացու, Արշակունի արքայատոհմի հայկական ճյուղի ավանդական հիմնադիր Վաղարշակը (Տրդատ Ա) գահ բարձրանալով «... Նախ եւ առաջ փոխարեն բարեաց հատուցանելով առնն զօրաւորի եւ իմաստնոյ, որ ի Հրէիցն՝ Շամբատայ Բագարատ. տալով նմա իշխանութիւն ազգաւ թագադիր լինել Արշակունեաց. եւ որ ի նմանէ ծնեալ ազգ՝ լինել կոչմամբ յանուն նորա Բագրատունի, որ է այժմ մեծ նախարարութիւն ի մէջ աշխարհիս։ Քանզի այս Բագարատ նախաձեռն ընծայ ըստ կամաց մատոյց զինքն Վաղարշակայ յառաջ քան զպատերազմունսն Արշակայ ընդ Մակեդոնացիսն, եւ սա ի դրան արքունի։ Իսկ ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ, իշխան բիւրոց եւ հազարաց, յարեւմտից կուսէ»[38]։

Այս նույն անձնավորության վերաբերյալ Ս. Երեմյանը գրում է. «Մովսես Խորենացու մոտ հայտնի Շամբատ Բագարատը (Անանունի Բագարատ Փառազյանը) ժամանակակից էր Վաղարշ Ա-ին և Տրդատ Ա-ին, և Ադիաբենի թագավորներին հետևելով, ընդունել էր հրեական կրոնը (ավելի ճիշտ՝ նախնական քրիստոնեության ուսմունքներից մեկը)։ Ինչպես երևում է, այս Բագարատը պարթևներին կողմնակից հայ մեծամեծներին (Μεγιστᾶνες) էր գլխավորում և նրանց հետ միասին ապաստան էր գտել Մծբինում։ Անանունի տեղեկություններից ակնհայտ է դառնում, որ Բագարատ Փառազյանն (ըստ Խորենացու՝ Շամբատ Բագարատը), իբրև հայ ավագանու ներկայացուցիչ և պարթև Արշակունիների արքունիքի ամենամոտ և հավատարիմ անձնավորություններից մեկը, մասնակցում է Տրդատին Մեծ Հայքի թագավոր հռչակելու արարողություններին, հանդես գալով իբրև թագադիր-թագակապ»[39]։

Ըստ Մովսես Խորենացու, Շամբատ և Սմբատ անունները նույնական են[40]։ Եթե այդպես է, ապա, իսկապես, Շամբատ Բագարատը նույն Սմբատ Բագրատունին է՝ «Քարթլիս ցխովրեբայի» Սումբատ Բիվրիատիանը։ Ի դեպ, վերջինս Սմբատի հայրանունն է, որովհետև, ըստ Խորենացու, նրա հորը կոչում էին Բյուրատ (գրաբ. Բիւրատ)[41]։ Այստեղից էլ Սմբատ Բագրատունու Բյուրատյան հայրանունը (գրաբ. Բիւրատեան>մոտ. Բիվրիատիան)։

---

36 Նույն տեղում, էջ 108—109։

37 «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 720։

38 Մ. Խորենացի, էջ 104—105։

39 «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 747։

40 Մ. Խորենացի, էջ 196։

41 Նույն տեղում, էջ 162։

Ռազմական մեծ ուժերի գլուխ անցած Սմբատը մտել էր Վիրք։ Ինչպես «Քարթլիս ցխովրեբան» է վկայում, «...(նա) հաղթանակով մտավ Քարթլի, ավերեց (ամբողջ) Քարթլին բերդերից ու քաղաքներից զատ։ Իսկ բերդերի ու բաղարների հետ չէր կռվում, քանի որ պատրաստ չէր՝ շտապ ելնելու պատճառով։ Նա մի բերդ կառուցեց Օձրխեում, որը Սամցխե է կոչվում, Դեմոթ անունով մի տեղում՝ Ղադո լեռան կպած, թողնելով մեջը զորամաս՝ Ծունդացվոց օգնության համար, քանի որ (ինքն) Օձրխեցվոց հետ կռվելու գնաց»[42]։

Բերված հատվածում արձանագրված իրավիճակի համաձայն, Սամցխեն (Օձրախեն սրա մեգրելական անվանումն է)[43], այսինքն՝ մոսխերի երկիրը, թշնամաբար էր տրամադրված հայոց գահակալի նկատմամբ։ Իսկ դա ավելի բնորոշ է 37 թ. հաջորդած (քան թե նախորդած) ժամանակաշրջանի համար, երբ այս երկրամասը (նախկին Գոգերձական կուսակալությունը) անջատվելով Մեծ Հայքից, դարձել էր հռոմեա-վրացական կողմի ամուր հենարանը հայերի և պարթևների դեմ՝ մանավանդ 57—59 թթ. Կորբուլոնի արշավանքի ժամանակ։

Այսուհանդերձ, բացառված չէ, որ վերոբերյալ հատվածում (և ընդհանրապես Սմբատ Բագրատունու վերաբերյալ մեզ հասած տեղեկությունների մեջ) ի մի են ձուլված ինչպես Տրդատ Ա-ի, այնպես էլ Արտաշես Ա-ի (189—160 թթ. մ. թ. ա.) ժամանակաշրջանի դեպքերի նկարագրությունները։ Պատճառը կարող էր լինել թե՛ այն, որ հայոց այս երկու թագավորներն էլ կրել են միևնույն Արտաշես գահանունը[44], թե՛ այն, որ նրանք երկուսն էլ իրենց ժամանակին ռազմական գործողություններ էին ծավալել Մեծ Հայքի այդ նույն ծայրամասերում։ Հիշենք, որ Մեծ Հայքի հյուսիսային ծայրամասերը՝ Պարիադրեսի լեռնալանջերը, Խորձենեն և Գոգարենեն, ըստ Ստրաբոնի, հայոց Միջնաշխարհին էր միացրել Արտաշես Ա-ն[45], իսկ Տրդատ Ա-ի օրոք դրանք վերամիավորելու անհրաժեշտություն էր ստեղծվել։

Մեծ Հայքի նախկին հյուսիսային կուսակալությունը՝ Գոգերձականը, վերադարձնելու նպատակով Սմբատ Բագրատունու (Սմբատ Բյուրատյան) թափած ջանքերը հաջողությամբ չէին պսակվել։ Դա պարզ երևում է դեպքերի հետագա ընթացքից։ Հայտնի է, որ մ. թ. 75 (կամ 74) թ. տեղի էր ունեցել ալանների գլխավորած «հյուսիսական», հրոսակախմբերի հերթական ներխուժումը Անդրկովկաս[46]։ Դարիալի և Վիրքի վրայով տեղի ունեցած այս ներխուժման ժամանակ «հյուսիսականները» ավերի ու ավարի էին մատնել նաև Վիրքը և «...ինչպես երևում է, թշնամուն դիմագրելիս, ընկել է կռվի դաշ-

---

42 Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. I, Երևան, 1934, էջ 157։

43 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 79։

44 Այդ առթիվ տե՛ս Ա. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 242—250, Н. Адонц, նշվ. աշխ., էջ 432, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 353, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 12—14, Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 122—123, Գ. Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 149—150, 182։

45 Strabo, XI, 14, 5.

46 Cass. Dio, LXVI, 15, 3; Suetonius, Domitianus. II.

տում Փարսման Ա թագավորը»[47]։ Ըստ երևույթին, ալանները վերջին համարձակ քայլին դիմելիս օգտվել էին 70-ական թվականների կեսին վրացա-հռոմեական փոխհարաբերություններում առկա լարվածությունից։ Հռոմը Վիրքի ուժեղացմամբ շահագրգռված էր այնքանով միայն, որքանով որ նրա գահակալները կշարունակեին մնալ իր հլու-հնազանդ կամակատարները։ Վերջիններիս կողմից կայսրության շահերն անտեսող ինքնուրույնության որևէ դրսևորում Հռոմում գնահատվում էր որպես թշնամական քայլ։ Եվ կայսրությունը չէր հապաղում իրականացնելու իր հակաքայլը՝ երկրում երկպառակության սերմանումը՝ նրա ուժերը ներսից ջլատելու միտումով[48]։

Վրացա-հռոմեական փոխհարաբերություններում առկա լարվածությունը, հավանաբար, գոյություն ուներ 60-ական թվականների կեսից սկսած։ Նրա գլխավոր պատճառը պետք է լիներ այն ինքնուրույնությունը, որ ցուցաբերել էր Փարսման Ա-ն Արշակունիների և Հայաստանի հետ իր փոխհարաբերությունները կանոնավորելու հարցում։ Ըստ երևույթին, երբ Սմբատ Բագրատունու (Սմբատ Բյուրատյան) զորքերը բուն Վիրքը ասպատակելուց հետո ներխուժել էին Սամցխե (Օձրախ) այն Մեծ Հայքին վերադարձնելու ակնկալությամբ, Փարսմանը ստիպված է եղել հաշտություն խնդրելու։ Ամենայն հավանականությամբ, հաշտությունը կայացել էր նախկին Գոդերձական կուսակալությունը Վիրքի գերիշխանության տակ թողնելու հայկական կողմի համաձայնությամբ՝ Հայաստանը արշավող «հյուսիսականների» դիմաց Դարիալը (հնարավոր է նաև հարևան մյուս լեռնանցքները) փակելու վրացական կողմի ստանձնած պարտավորության դիմաց։

«Հյուսիսականների» 75 թ. արշավանքի ժամանակ հայ-վրացական բարիդրացիական փոխհարաբերությունների գոյությունն է արձանագրել «Պատմութիւն Տարօնոյ» երկից քաղված հետևյալ հատվածը. «Արքայն հիւսիսոյ զօր գումարեալ եկն ի վերայ իշխանին վրաց. եւ զնա փախստական արարին, բերին մինչեւ ի Կարնոյ քաղաք. եւ զերկիրն գերի վարեալ տարան ոգիս իբրեւ քառասուն եւ ութ Ռ։ Արդ իբրեւ եհաս պատգամաւորն վրաց իշխանին առ թագաւորն Տրդատ եւ զօր խնդրել իւր յօգնականութիւն։ Եւ թագաւորն տուեալ ԼՌ ի ձեռս իշխանին Ապահունեաց եւ արձակեաց յօգնականութիւն վրաց իշխանին»[49]։ Ինչպես այս հատվածը, այնպես էլ «հյուսիսականներին» վերաբերող «Տարոնի պատմության» պահպանած տեղեկությունների ստվար մասը առնչվում է Տրդատ Ա-ի օրոք տեղի ունեցած նրանց ներխուժումներին, չնայած հետագա շարադրանքում առկա են նաև հաջորդ ներխուժումներին վերաբերող ինչ-ինչ դրվագներ[50]։

Այսպիսով, չնայած այն բանին, որ մ. թ. 37 թ. Մեծ Հայքի կազմից հանված նրա հյուսիսային և հարավ-արևմտյան ծայրամասերը (Գոդերձական կուսակալությունը և հյուսիսային Միջագետքը) այդպես էլ մնացին Արշակունյաց Հայաստանի սահմաններից դուրս, այնուամենայնիվ, Տրդատ Ա-ի

---

47 «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 768։

48 Г. А. Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959, էջ 341։

49 «Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ», Երևան, 1941, էջ 117—118։

50 Խոսքը վերաբերում է հատկապես «հյուսիսականների» մինչև Տարոն հասնելու և Աղձնեաց բդեշխի դավաճանության դրվագներին (տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, էջ 300, հ. Գ, Երևան, 1968, էջ 451)։

կողմից վերսաին հայկական թագավորության մեջ էին ընդգրկվել ինչպես գրանցից առաջ անջատված Կասպքը (տրևելքում) և գրանից հետո անջատված Ոուքը (արևմուտքում), այնպես էլ Կորրուլոնի 57—59 թթ. հայկական արշավանքի ժամանակ բռնի կերպով Մեծ Հայքի կազմից հանված և Հռոմի կամքով հարևան թագավորների ու ցեղերի անօրինությանը հանձնված նրա հյուսիս-արևմտյան և հյուսիսային ծայրամասերը՝ հին Եկեղիքը (Ակիլիսենե), Սպերը, Տայքը, Խորձեանն և Գուգարքը։

СЕВЕРО-ЗАПАДНЫЕ И СЕВЕРНЫЕ СОСЕДИ ВЕЛИКОЙ АРМЕНИИ В СФЕРЕ АРМЯНО-РИМСКИХ ВЗАИМООТНОШЕНИИ

(третья четверть I в.).

САРГИС ПЕТРОСЯН

Резюме

Осуществление своей политической программы окончательного разрешения армянского вопроса Нерон (54—68 г. н. э.) начал с того, что в пограничных странах Великой Армении усилил проримские элементы. Затем римские и союзные силы в 57 г. стали продвигаться в глубь Армении. В конце концов Тиридат I (54—80, официально с 66 г. н. э.), претендовавший на армянский престол, был вынужден удалиться из Армении. Тогда же северные и северо-западные районы (т. е. древняя Акилисена, Спер, Тайк и Гогарена с Хордзеной) вышли из состава древнеармянского государства. Таким образом, римляне лишили Армению защитных рубежей в горах Гогаренско-Хордзенских и в хребтах Пархарско-Понтийских. Переход этих районов к союзникам-вассалам римлян (царям Малой Армении, Понта, «гениохов и махелонов» и Иберии) предоставлял Риму возможность усилить давление на Великую Армению также с северо-запада и с севера. Когда парфяно-армянские союзные силы в 63 г. окончательно изгнали римлян из Великой Армении, Рим был вынужден признать Тиридата I законным властителем страны. После этого малоазиатские и кавказские союзники—вассалы римлян—вынуждены были отказаться от своих «прав» по отношению к пограничным районам Великой Армении.